ՈՐՏԵ՞Ղ ԵՆ ԳՏՆՎԵԼ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ԵՎ ԵՐՎԱՆԴԱԿԵՐՏ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Պրոֆ. Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Երվանդունիների հարստության վերջին թագավոր Երվանդի կողմից մ. թ. ա. III դարի վերջերին և II դ. սկզբներին հիմնադրված և նրա անուն կրող երկու քաղաքների մասին հնագույն, առավել ընդարձակ և արժեքավոր տեղեկությունները մեզ հաղորդել է Մովսես Խորենացին։ Պատմահոր այդ վկայությունները եղակի լինելով՝ արտակարգ արժեքավոր են, ուստի հարկ ենք համարում մեջ բերել ամբողջությամբ։

Խոսելով Երվանդ արքայի մասին, Մովսես Խորենացին[1] գրում է. «Յաւուրս սորա փոխին արքունիքն յԱրմաւիրն անուանեալ բլրոյ. քանզի էր հեռացեալ գետն Երասխ, և ի երկարել ձմերայնոյն, և ի դառնահոտ փչմանէ հիւսիսոյ պաղացեալ ձուլեալ վտակն՝ ոչ ուստեք արբուցումն բաւական թագաւորականին գտանէր տեղւոյ։ Ընդ որ նեղեալ Երուանդայ, նաև ամրագունի ևս տեղւոյ ելեալ ի խնդիր՝ փոխէ զարքունիսն յարևմուտս կոյս, ի քարակտուր մի բլուր, ղորով պատ առեալ Երասխայ՝ ընդդէմ Ախուրեանն հոսի գետ։ Պարսպէ զբլուրն, և ի ներքսագոյն քան զպարիսպն ընդ բազում տեղիս կտրեալ զքարինսրն մինչև ի յատակս բլրոյն հաւասար գետոյն, մինչև գիմել ջուրց գետոյն ի փորուածն, յրմպելեաց պատրաստութիւն։ Զմիջնաբերդն ամրացուցանէր բարձր պարսպօք, և դրունս պղնձիս կանգնէր ի միջոցի պարսպին. և ելանելիս երկաթիս ի ներքուստ ի վեր մինչև ցդուռնն. և ի նմա որոգայթս իմն ծածուկս ընդ մէջ աստիճանացն, որպէս զի ըմբոնեսցի՝ եթէ ոք գաղտ ելանելով դաւել կամիցի զարքայն։ Եւ էր, ասեն, երկդիմի. որպէս զի մինն լիցի սպասաւորաց արքունի և ամենայն ելևմտից ճանապարհ տուրնջենային, իսկ միւսն գիշերային և մարդադաւաց»։

Խորենացու վկայությամբ Երվանդաշատը տեղադրված էր Երասխի ափին բարձրացող մի բլրի վրա, որի շուրջը պտույտ էր գործում գետը, իսկ դիմացը հոսում էր Ախուրյանը։

Ավելի պատկերավոր է Երվանդակերտի տեղագրական նկարագրությունը։ Խորենացին գրում է. «Քաղցր է իսկ ասել և յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ գեղեցիկ և չքնաղ յօրինուածովք։ Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ և պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիբ։ Իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց և հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբբովն զայլ բոլորակութիւն ական։

1 Խորենացին, հիշտ բնութագրելով Երվանդի գործունեությունը, նրան չփոթել է Օսրոյենի Երվանդ թագավորի հետ, որը ժամանակակից էր Ադրիանոս կայսրին (117—138). տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, էջ 135։

2 Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. ԼԹ։

Իսկ զրազմութիւն այդեստանոյ՝ իրր զարտեանանց խիտ և դեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնաձև՝ արդարև դեղաւոր կուսից յօնից դարաւանդաց համեմատ։ Իսկ ի հարաւոյ հարթութիւն դաշտաց՝ ծնօտից պարզութեան դեղեցկութիւն։ Իսկ դետն բերանացեալ դարաւանդօք ափանցն՝ զերկթերթիսն նշանակէ շրթունս։ Եւ այսպիսի դեղեցկութեան դիր՝ անքթելի իմն դողցես ի բարձրաւանդակ թագաւորանիստն զհայեցուածսն ունի. և արդարև բերրի և թագաւորական դաստակերտն»[3]։

Այս վկայութիւնից պարզ երևում է, որ Երվանդակերտը թագավորի սեփական տիրույթ՝ դաստակերտ էր կամ ձեռնակերտ։ Նա հեռու չէր Երվանդաշատ մայրաքաղաքից և տեղադրված էր դետի երկու ափին, քանի որ «դետն բերանացեալ դարաւանդօք ափանցն՝ զերկթերթիսն նշանակէ շրթունս»։

Երվանդակերտն այնպիսի բնույթի քաղաք էր (ձեռնակերտ, դաստակերտ), որ քիչ թե շատ նկատելի զարդացում չունեցավ, մինչդեռ Երվանդաշատը աճեց ու դարձավ հին Հայաստանի առավել խոշոր և աչքի ընկնող քաղաքներից մեկը։ 360-ական թթ. պարսից Շապուհ II արքայի բանակները գրավեցին և ավերեցին նաև Երվանդաշատ քաղաքը. այդ առթիվ Փավստոս Բուզանդը գրում է. «առնուին և զմեծ քաղաքն Երուանդաշատ, և խաղացուցանէին անտի երդս քսան հազար հայ, և երդս երեսուն հազար հրեայ և քաղաքն ի հիմանց տապալեալ բրեալ յատակէին»[4]։

Եթե 50 հազար երդ (բնտանիք) բնակչությունը Երվանդաշատի համար չափազանցություն համարվի, այնուամենայնիվ դա պետք է դիտվի իբրև վկայություն՝ այդ հին քաղաքի իրոք մեծ և բազմամարդ լինելու մասին։

Շապուհի բանակների ձեռքով կործանվելուց հետո այդ քաղաքն այլևս չվերականգնվեց, ուստի նրա հետագա գոյության մասին աղբյուրներում ոչ մի վկայություն չկա, իսկ հնագիտական դիտողությունները, կարելի է ասել, չեն հակասում դրան։ Ինչպես երևում է, նույն բախտին է արժանացել նաև Երվանդակերտը։ Գործածվելով դեռևս IV դարում և չվերականգնվելով հետագայում, այդ քաղաքները անհետացան, ուստի նրանց ավերակների տեղի որոշումը զգալիորեն դժվարացել է։

Ասողիկը, վերապատմելով Խորենացու վկայությունը Երվանդաշատի հիմնադրման առթիվ, քաղաքի պարսպյալ բլրի մասին գրում է, թե «այժմ ասի Երուանդաբարս»[5]։ Տարոնացին արդյոք ստույգ դիտե՞ր Երվանդաշատ-Երվանդաբարի տեղադրությունը, կամ չէ՞ր շփոթում Երվանդակերտի հետ՝ դժվար է ասել։

Նոր ժամանակներում քանիցս փորձել են պարզել Երվանդաշատի և Երվանդակերտի տեղադրությունը։ Հովհաննես Շահխաթունյանցը, որն անցյալ դարի առաջին կեսին այցելել է այս վայրերը, ենթադրել է, թե Երվանդակերտը գտնվել է Արաքս դետի հարավում՝ Արաքսի հետ Ախուրյանի խառնվելու տեղի դիմաց, իսկ Հաջի-Բայրամ գյուղի մեջ գտնվել է Երվանդաշատ քաղաքի մի արվարձանը, որը կապվել է բուն քաղաքի հետ մի կամուրջով։ Վերջինիս հետ-

3 Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. ԽԲ։

4 «Փաւստոսի Բիւզանդացւոյ պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1889, էջ 177։

5 «Ստեփանոսի Տարոնացւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական», Պետերբուրգ, 1885, էջ 47։ Գյուլորիենը (էջ 86) կարծում է, թե «Երուանդաշատ» և «Երուանդակերտ» ոչ թե երկու քաղաք են եղել միմյանցից բաժանված երասխ գետով, այլ միևնույն քաղաքի պարթևական և հայկական անուններն են։

քերը նա տեսել է տեղում[6]։ Շահխաթունյանցը գրում է. «Ի Հաճի-Բայրամ գեղջէ ընդ գետն ի վեր իբրև քառորդ մի ժամու ի ձորամիջի անգ է աւերեալ տեղի բաղում տանց. ուր է և փոքրիկ ամրոց աւերեալ, այլ արևմտեան բուրգն նորա մեծ մասամբ կայ կանգուն, և յարևմտեան ճասատի այնր բրգան գտանի արձանագրութիւն հայկական տառիւք, այլ վասն բարձրութեանն և ի տեղիս տեղիս եղծեալ գոլոյն չկարողացաք առնուլ ի գիր»[7]։ Այնուհետև նշելով, որ այս ամրոցից արևելք կան կոփածո կարմրագույն քարից կառուցված մի մատուռի ավերակները, որի պատի վրա պահպանվում է 1218 թ. արձանագրություն, հեղինակը շարունակում է. «Հանդէպ այսր տեղւոյ յանկոյս գետոյն երևին բաղում ավերակք տանց և փոքրիկ ամրոցի միոյ և մատրանն»[8]։ Հաջի-Բայրամից քառորդ ժամ հեռավորության վրա գտնվող և Ախուրյանի երկու ափերին տարածվող այս ավերակները Շահխաթունյանցը, ըստ երևույթին, վերագրել է Երվանդաշատին, որի մի արվարձանն էլ, նրա ասելով, ձգվում էր հարավ և բռնում Հաջի-Բայրամ գյուղի տեղը։

Ալիշանի «Շիրակ» աշխատությանը կցված քարտեզում Երվանդաշատը նույնացված է Մարմետի հետ և տեղադրված Արաքսի ու Ախուրյանի գետախառնուրդի մոտ՝ Ախուրյանի աջ կամ արևմտյան ափին, իսկ Երվանդակերտը նրա դիմացը՝ գետի ձախ ափին, Հաջի-Բայրամ (այժմ՝ Բախչալար) գյուղին կից։ «Այրարատ» աշխատության մեջ Ալիշանը ավելի հանգամանորեն է քննում Երվանդաշատի և Երվանդակերտի տեղագրությունը։ Նա կրկնում է իր նախկին կարծիքը, սոսկ ռուսական մեծադիր քարտեզից իմանալով, որ Հաջի-Բայրամ գյուղից դեպի խերբեկլու գտնվում են «մեծատարած աւերակս մղոնաչափ սրփոեալ ընդ արևելս ի վերայ բարձրավանդակ դաշտակի առ Երասխաւ», և ավելացնում է, որ դրանք մի մեծ քաղաքի մնասերն են, որ «նույն ինքն դաստակերտն (Երվանդակերտ) մասն ևթ է համարելի Քաղաքին Երուանդտ (Երվանդաշատ), որ միայն զամրոցն և զկարևոր շինուածս կառոյց յարևմտեան անկյան գետակցացն և յարևելակողմն՝ զրնակարանս մարդկութեաննն»[9]։ Գրքում զետեղված քարտեզի վրա Ալիշանը Երվանդակերտը ցույց է տալիս Հաջի-Բայրամից հարավ-արևելք, իսկ Երվանդաշատը՝ ոչ թե անմիջապես նրա դիմացը, Ախուրյանի արևմտյան կամ աջ ափին, այլ գետերի խառնուրդից մոտ 8 կմ դեպի արևմուտք, նույնացնելով այն Մարմետի հետ և ճշտելով վերջինիս տեղը։

Գ. Վարդանյանի կազմած, Գ. Դյուստերտիգի գծագրած և 1910 թ. Թիֆլիսում նրանց հրատարակած Հայաստանի պատմական մեծադիր քարտեզի վրա Երվանդաշատը տեղադրված է Արաքսի ձախ ափին՝ Ախուրյանի խառնուրդի մոտ, իսկ Երվանդակերտը՝ Արաքսի աջ ափին, Կողբից արևելք, Կարակալայի տեղում, որտեղ հնում եղել է Յոլակերտը։

Հնագետներից Երվանդաշատի և Երվանդակերտի մնացորդների հետախուզությամբ զբաղվել է Թ. Թորամանյանը։ Նա 1909 թ. այցելել է այս վայրերը, տեղում դիտել հնագիտական մնացորդները։ Նույն թվականին «Ախուրյան» թերթի 65-րդ համարում նա տպագրել է «Երվանդաշատ և Երվանդա-

6 Շահխաթունեանց Յովհաննէս, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ դաւառաց Արարատայ, էջմիածին, 1842, հատ. 2, էջ 39։

7 Նույն տեղում, էջ 39—40։

8 Նույն տեղում, էջ 40։

9 Ալիշան, Այրարատ, էջ 63։

կերտ» խորագրով ուշագրավ մի հոդված, որը արտատպված է նրա նյութերի ժողովածուի Ա հատորում։ Թորամանյանը Արաքսի և Ախուրյանի գետախառնուրդի մոտ՝ Ախուրյանի աջ ափին տեսել է «մի բանի ցիր ու ցան ավերակներ։ Գետեզրին մոտիկ քար ու բանդ եղած մի փոքր մատուռ», սրբատաշ քարով մի ուրիշ շինության մնացորդներ, որոնք նա համարել է XIII—XIV դարերի գործեր։ «Ասոնցմե քիչ հեռու,— գրում է Թորամանյանը,— դեպի հյուսիս-արևմուտք կնշմարվի մի ուրիշ շինություն, որ իսկապես բազմաղարյան հնության դրոշմը ունի իր վրա։ Որձաքարերի մեծամեծ զանգվածներով շինված են պատերը, որ բոստինքյան հայ շինություններու ամենահին շրջանին կվերաբերին։ Շինությունը թեև երկհարկանի է եղած, սակայն շատ փոքր է և միայնակ մնացած է բլրի մը գլխին։ Հեռու կամ շատ մոտ հատ-հատ կերևին մանր մուր շինության մնացորդներ, սակայն այս ամենը բավական չեն բնավ Խորենացիի այնքան ներբողած Երվանդաշատի մնացորդները համարվելու համար»[10]։ Հետինակը նշում է, որ Ախուրյանի աջ ափը բոլորովին հարմար չէր մեծ քաղաք կառուցելու համար։ «Գետափին ամբողջ երկարությամբ մինչև Արաքսի ափը,— ասում է նա,— թերևս նեղ շերտի մը վրա գտնվեր փոքրաթիվ բնակչություն և հանդիպակաց ափին վրա գտնված քաղաքին մի բաղաքամասը կազմեր...»[11]։ Ավելի մեծ թվով և համեմատաբար լավ երևացող շինությունների մնացորդներ Թորամանյանը տեսել է գետի ձախ կամ արևելյան ափին։ Նա գրում է. «Երբ անցա Ախուրյանի ձախ ափը, արդեն ամեն բան կերպարանափոխ եղավ, ամեն քայլափոխին կնկատվին մեծամեծ շինությանց հետքեր՝ ցրված մինչև Հաջի-Բայրամ գյուղի ստորին սահմանները։ Գետեզրի հետ միասին մինչև Հաջի-Բայրամ ձգվող բարձր սարը այսօր ալ ինքնին մի մեծ բերդ կարելի է համարել, և ամեն հարմարություններ կներկայացնե ի հնումն բոլորովին անառիկ դարձնելու։ Արդեն կատարին վրա ամբողջ երկայնությամբ կերևին որձաքարերով հյուսված ահավոր պարիսպներու մնացորդներ, որոնք տեղ-տեղ 4—5 մետր բարձրությամբ կերևին։ Բացի սարը վերևեն շրջապատող պարիսպներեն, նաև կերևին առանձին մեծ բերդամասերու բաժանմունքները լանջին զառիվարեն դեպի ցած ձգված»[12]։ Ախուրյանի վրա ներկայումս գոյություն ունեցող կամուրջից վերև, ձորի բարձրադիր լանջին Թորամանյանը տեսել է բազմաթիվ շինությունների մնացորդներ, «որոնցմե մեկուն տեղական բնակիչները ավանդաբար պալատ անունը կուտան։ Թեև բավականին հին շինություն է և զարմանալի կերպով մեծամեծ որձաքարերով հյուսված, սակայն պալատ համարվելու ամեն առանձնահատկություններն զուրկ է, թերևս եղած է մի մասնավորի մեծ բնակարան՝ երկհարկանի և քանի մը բաժանումներով»[13]։ Այս շինությունից վերև Թորամանյանը տեսել է միջնադարյան մի մատուռի մնացորդները, որի հյուսիսային կործանված պատի վրա եղել է արձանագրություն։ Ժամանակակից կամուրջից ներքև Թորամանյանը նկատել է հին կամուրջի հետքեր և գտնում է, որ բաղաքը մինչև այդտեղ է հասել։ Հաջի-Բայրամ գյուղում Թորամանյանը շենքերի հետքեր չի տեսել, բայց պարսկերենի ցանկապատերի

---

10 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատ. Ա, էջ 283—284։

11 Նույն տեղում, էջ 284։

12 Նույն տեղում, էջ 254։

13 Նույն տեղում։

մեջ գրված են եղել հին շենքերից բերված մեծապանգված քարեր, որոնց վրա տակավին պահվել են երկաթե կապերի տեղերը[14]։

Այս ամենի հիման վրա Թորամանյանը եզրակացնում է, որ Երվանդաշատը գտնվել է Ախուրյանի ոչ թե աջ, այլ ձախ ափին. «Պարզապես մեր այսօրվան Երվանդակերտ կարծվածն է հին Երվանդաշատը, իսկ Երվանդակերտը պետք է փնտրել Արաքսի մյուս ափին վրա»[15]։ Թ. Թորամանյանը այնուամենայնիվ հարցը լուծված չէր համարում և իրավացիորեն անհրաժեշտ էր գտնում մասնագիտական արշավախումբ կազմել տեղում այս հարցը հանգամանորեն դիտելու համար։

Հետագայում իր աշխատություններում Թորամանյանը քանիցս հիշատակում է Երվանդաշատի շինությունների կառուցողական հին ձևերը և տեխնիկան, մասնավորապես երկաթե կապերի օգտագործումը, գտնելով, որ Հաջի-Բայրամի մոտի ավերակները պատկանում են Երվանդաշատին[16]։

Պրոֆ. Ս. Երեմյանը իր պատմական քարտեզներում, որոնք հրատարակված են ատլասի ձևով, Խորենացու նկարագրության համաձայն Երվանդաշատը տեղադրում է Արաքսի և Ախուրյանի գետախառնուրդի արևելյան անկյունում, սակայն քարտեզների փոքր մասշտաբները թույլ չեն տալիս ստույգ որոշելու քաղաքի իսկական տեղադրությունը, իսկ հնագիտական դիտողությունների մասին խոսք լինել չի կարող։ Թե որտեղ է նա տեղադրում Երվանդակերտը, մեզ հայտնի չէ, քանի որ քարտեզների վրա այդ քաղաքը չի նշվում։

Թ. Հակոբյանը Հայաստանի պատմական աշխարհագրությանը նվիրված աշխատության մեջ նույնպես Խորենացու հաղորդած տեղեկության համաձայն ասում է, թե Երվանդաշատը գտնվում է Երասխի և Ախուրյանի գետախառնուրդում։ Սակայն անձամբ ծանոթ չլինելով տեղանքին, նա կարծում է, թե այն տեղադրված է բարձր լեռան գագաթին[17], մինչդեռ Խորենացին ասում է «ի քարակոր մի բլուրս»։ Իր կազմած սխեմատիկ քարտեզի վրա նա, Վարդանյանի նման, Երվանդաշատը տեղադրել է Արաքսի ափին, Ախուրյանի դիմաց։ Երվանդակերտի մասին Թ. Հակոբյանը գրում է. «Գտնվում էր Երվանդաշատից ոչ հեռու, դեպի արևելք՝ Երասխի բարձրադիր ձախ ափին»[18]։ Բայց նրա ասած տեղերում հնությունների հետքեր բոլորովին չկան։

Եթե ամփոփելու լինենք գիտնականների տեսակետները, ապա կստացվի հետևյալ պատկերը։

Ըստ Շահխաթունյանցի Երվանդաշատը տեղադրված է եղել Արաքսի և Ախուրյանի գետախառնուրդի դիմաց, Արաքսի աջ կամ հարավային ափին, իսկ ձախ ափին՝ Հաջի-Բայրամ գյուղի տեղում, գտնվել է Երվանդաշատ քաղաքի մի արվարձանը։ Ըստ Ալիշանի՝ երկու գետերի խառնուրդի մոտ, Ախուրյանի աջ կամ արևմտյան ափին (ըստ «Այրարատ»-ում զետեղված քարտեզի՝ ափից էլ մի քանի կիլոմետր հեռու)։ Ըստ Թ. Թորամանյանի՝ երկու գետերի խառնուրդի մոտ, Ախուրյանի ձախ ափին՝ Հաջի-Բայրամ գյուղից քիչ հյուսիս, այժմյան կամուրջի մոտ, իսկ քաղաքի մի թաղամասն էլ եղել է Ախուրյանի մյուս

14 Նույն տեղում, էջ 285։
15 Նույն տեղում, էջ 286։
16 Նույն տեղում, հատ. Ա, էջ 145, 296, 330—332, 336, 355, հատ. Բ, էջ 128։
17 Թ. Խ. Հ ա կ ո բ յ ա ն, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1960, էջ 130։
18 Նույն տեղում, էջ 131։

ափին։ Ըստ բոլոր քարտեզագետների՝ համաձայն Խորենացու վկայության՝ երկու գետերի խառնուրդի արևելյան անկյունում, կամ՝ Ախուրյանից փոքր-ինչ դեպի արևելք, Արաքսի ձախ ափին։ Սակայն քարտեզագետներից ոչ մեկը չի ստուգել քաղաքի տեղը հնագիտական դիտողություններով և հիմնվել է սոսկ Խորենացու տեղեկությունների վրա (Ս. Երեմյանը հաշվի է առել նաև Թ. Թորամանյանի դիտողությունները)։

Երվանդակերտը գիտնականները տեղադրել են այսպես. ըստ Ալիշանի՝ Արաքս և Ախուրյան գետերի խառնուրդի արևելյան անկյունում, Հաջի-Բայրամ գյուղի հարավային կողմում (ընդ որում նա մի անգամ էլ ասում է, թե Երվանդակերտն ու Երվանդաշատը խառնված են իրար և Ախուրյանից աջ կամ արևմուտք գտնվում էր Երվանդաշատի բերդը)։ Ըստ Վարդանյանի՝ Երվանդակերտը գտնվել է Արաքսի աջ կամ հարավային ափին, Կարակալայի տեղում։ Ըստ Հակոբյանի՝ Երվանդակերտը գտնվել է Արաքսի ձախ ափին, Երվանդաշատից արևելք։ Թորամանյանը, լավ իմանալով Ալիշանի կարծիքը Երվանդակերտի տեղի մասին, ասում է, որ այդտեղ պարզապես Երվանդաշատն է գտնվել, ուստի Երվանդակերտի տեղը թողնում է անորոշ։



Նկ. 1. Երվանդաշատ, շենքի մնացորդներ

Այս պայմաններում միանգամայն բնական է, որ Ախուրյանի կամուրջի մոտ գտնվող ավերակների լուսանկարները Պետական պատմական թանգարանում, Թորամանյանի կարծիքի համաձայն, ցուցադրված են որպես Երվանդաշատի մնացորդների լուսանկարներ։

Երվանդաշատի և Երվանդակերտի տեղադրությունը և նրանցից պահպանված մնացորդների հարցը հետաքրքրել է նաև մեզ։ Այդ նպատակով երիցս այցելել ենք այն վայրերը, որտեղ պետք է տեղադրված լինեին այդ քաղաքները։ Առաջին անգամ 1954 թ. հուլիսին մի արշավախմբով, որի կազմում էին հարտարապետության թեկնածու Վ. Հարությունյանը, պատմական գիտությունների թեկնածուներ Հ. Մնացականյանը և Գ. Սարգսյանը, երկու օրվա ընթացքում հետազոտեցինք տեղանքը։ Սկզբում դեռևս տարակուսանք չունեինք թե-

Թորամանյանի կարծիքի ճշտության վերաբերյալ, ուստի մեր ժամանակի մեծագույն մասը ծախսեցինք Բախչալար (նախկինում՝ Հաջի-Բայրամ) բնակավայրի և նրա մերձակայքի հետազոտության վրա։ Գյուղում ոչ մի հուշարձանի հետք չգտանք, գյուղից հարավ, Ախուրյանի և Արաքսի գետախառնուրդի անմիջապես անկյունում, կային ուշ միջնադարյան մի փոքր բերդի հետքեր։ Գյուղի հյուսիսային ծայրին տեսանք միայն միջնադարյան տապանաքարեր և խաչքարեր։ Գյուղից 1,5 կմ դեպի վերև նկատեցինք հին հայկական շրջանի բազմաթիվ շինությունների մնացորդներ՝ ձորում ու նրա բարձրադիր լանջին։ Դրանց թվում կային քառակուսի, համարյա բոլորակ կամ ձվածիր հատակագիծ ունեցող շենքերի հիմնապատեր, երբ տեղում պահպանված մինչև մուտքի բարավորը։



Նկ. 2. Երվանդակերտ, կառույցի մուտքը

Գետափին մերձակա մի փոս ընկած տեղում, որից արևելք մեծ անկյան տակ դեպի վեր բարձրանում են սարի լանջերը, արևմտյան կամ գետի կողմում, փոքր ինչ բարձրագիր տեղում կառուցված է եղել մի շենք՝ բազալտե մեծամեծ քարերով, որի հիմքերի վրա միջին դարերում փոքր քարերով և կրով կանգնեցվել է մի աշտարակ։ Այստեղից դեպի հյուսիս գետն ի վեր կարելի է նկատել ճեղքված, բայց անտաշ քարերով կառուցված բազմաթիվ շենքերի հիմնապատեր, որոնք փռված են ձորի արևվելյան քարքարոտ լանջին 600—700 մ երկարությամբ։ Դրանց մեջ են գտնվում նաև կարմրավուն սրբատաշ տուֆ քարից կառուցված միջնադարյան մատուռի այժմ շատ ավելի քարուքանդ եղած հիմնապատերը։ Բնակատեղիի հյուսիսային ծայրին գտնվում էր միջնադարյան գերեզմանոց։

Այս հին բնակավայրի տեղադրված լինելը ոչ թե Արաքսի, այլ Ախուրյանի ափին, ձորի ոչ բավարար ընդարձակություն և մի խոշոր քաղաքի համար տեղանքի միանգամայն անհարմար լինելը լուրջ տարակուսանք առաջացրին Թորամանյանի հայտնած կարծիքի վերաբերյալ, թե այստեղ կարող է տեղադրված լինել Երվանդաշատը։ Այստեղ չկար այն բլուրը, «զորով պատ առեալ Երասխայ՝ ընդդէմ Ախուրեանն հոսի գետ»։

Անհրաժեշտ էր հետախուզել Արաքսի և Ախուրյանի գետախառնուրդից արևելք, Բախչալար և Խերբեկլու գյուղերի միջև ընկնող տեղանքը և գտնել այն բարձունքը, որի շուրջը պտույտ առներ Երասխը, իսկ դիմացից՝ այսինքն արևմուտքից հոսեր Ախուրյան գետը։

Դուրս գալով Բախչալարից գեպի Խերբեկլու՝ նկատեցինք, որ վերջինիցս քիչ դեպի արևմուտք փողում է մի ընդարձակ դարավանդ (տերաս)՝ կազմված իրար միացող բարձունքներից, որոնք ծածկված են պտղատու այգիներով և արտերով։ Այս դարավանդը Խերբեկլու գյուղի տեղի համեմատությամբ շատ ավելի բարձրագիր է, համարյա բոլորակ տեսք ունի, դեպի Արաքս գետը իջնում է ավելի ցածրագիր երկրորդ դարավանդով, որն այնուամենայնիվ շատ ավելի բարձր է գետի ջրերից։ Ամբողջ բոլորակաձև բարձրագիր դարավանդը արևմուտքից, և մանավանդ արևելքից, ողողված է եղել Արաքսի ջրերով։ Այսպիսով, դա իրոք կարող էր լինել այն բարձունքը, «զորով պատ առեալ Սրասխայ՝ ընդդեմ Ախուրեանն հոսէր գետ»։

Նկարագրվող դարավանդի հյուսիսային մասում՝ ճանապարհի մոտ նկատեցինք ոչ շատ մեծ ճեղքված քարերից շարված, բայց բավականաչափ լայն բեկվող գծերով ընթացող և բեկման անկյուններում աշտարակի հետքեր ունեցող պարսպի մնացորդները[19]։ Մենք հնարավորություն ունեցանք տեղանքը հետազոտել միայն վերին դարավանդի վրա, բայց այստեղ տեսանք միջնադարյան եկեղեցիների ավերակները, իսկ բարձունքի կենտրոնական մասում՝ հին դարերի շենքերի մնացորդներ, որոնցից մեկի անկյուններին նկատեցինք այդպիսի ոչ մեծ շենքի համար անսովոր աշտարակաձև կամ ավելի շուտ կոնտրֆորսի նմանվող ելուստներ։ Դեպի այս շենքը արևելքից-արևմուտք ձգվում էր փոքր-ինչ աղեղնաձև մի փողոց, որի երկու կողմերից պահպանվում էին քարե ցանկապատի մնացորդները։ Շենքերի մնացորդները նկատելի էին ընդարձակ այդ բարձունքի տարբեր մասերում։

Տեղանքի ստույգ համապատասխանությունը Խորենացու նկարագրածին և հին ժամանակների շինությունների մնացորդների առկայությունը բարձունքի տարբեր մասերում, մեծ քաղաքի համար տեղի կատարյալ հարմարությունը և քաղաքը շրջապատող պարսպի մնացորդները թույլ են տալիս ենթադրելու, որ Երվանդաշատը տեղադրված է եղել այստեղ։ Մեր այս ենթադրությունը գտավ արշավախմբի մասնակիցների հավանությունը և իր արտահայտությունը ունեցավ նրանցից Վ. Հարությունյանի 1955 թ. հրատարակած հոդվածում[20]։ Ժամանակի սղությունը արշավախմբին թույլ չտվեց ավելի հանգամանորեն գննել Երվանդաշատի տեղանքը և ավերակների պահպանված մնացորդները։ Կարելի է նաև ենթադրել, որ Ախուրյանի ձախ ափին եղած ավերակները պատկանում են Երվանդակերտին, որի մի թաղամասն էլ պետք է գտնվեր գետի աջ կամ արևմտյան ափին, բայց 1954 թ. մենք մյուս ափին ավերակների հետքեր չընկատեցինք, ինչպես Բախչալարում չնկատեցինք երկաթե կապերի հետքեր կրող քարեր, որոնց մասին քանիցս հիշատակել է Թ. Թորամանյանը։

1961 թ. հուլիսի սկզբներին Բառնիի հնագիտական արշավախմբի մի ջոկատ՝ ճարտարապետ Ա. Սահինյանի, պատմական գիտությունների թեկնածու Գ. Տիրացյանի, լաբորանտ Ժ. Խաչատրյանի և իմ մասնակցությամբ ավարտելով Փարաքարի մոտի անտիկ շրջանի նորահայտ մի հուշարձանի պեղումները, հուլիսի 11-ին մեկ օրով մեկնեց Երվանդաշատ և Երվանդակերտ, այս քաղաքների տեղանքը լրացուցիչ կերպով հետազոտելու նպատակով։

---

19 Պարսպի լայնքը ստույգ պարզել կարելի է պեղումների օգնությամբ։

20 Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1955, № 9, էջ 58։



Նկ. 3. Երվանդակերտ, շենքի մնացորդներ



Նկ. 4. Երվանդակերտ, ընդհանուր տեսքը

Այս անգամ հնարավորություն ունեցանք զննել Երվանդաշատի գետափնյա ավելի ցածրագիր դարավանդը, որտեղ քաղաքի հարավ-արևելյան մասում, գետի ափին գտնվող բարձունքի վրա նկատեցինք խոշոր և շատ կարևոր շենքերի կոմպլեքսի հետքեր և բազմաթիվ այլ շենքերի հետքեր՝ տարբեր տեղերում։ Պարզվեց, որ քաղաքի պարսպի հետքերը կարելի է նկատել սկսած քաղաքի հյուսիս-արևելյան անկյունից մինչև Արաքս գետի ափը, ապա ափի երկայնքով մինչև Բախչալարի մոտերքը։

Պետք է ենթադրել, որ քաղաքը սկզբում հիմնադրվել է Խերրեկլուին մոտիկ գտնվող բլրակի վրա, բայց աստիճանաբար ընդարձակվելով տարածվել է թե՛ հյուսիսային և թե՛ հարավային դարավանդների, ապա նաև դեպի արևմուտք՝ Ախուրյանի գետախառնուրդին մոտ ընկնող բլրախմբի վրա։ Հավանաբար քաղաքի աստիճանական աճման և ծավալման հետևանքով են գոյացել քաղաքի ներսում գտնվող և Արաքսի հունին ուղղահայաց հաստ պատերը, որոնք քաղաքը բաժանում են առանձին թաղամասերի։ Չի բացառվում, որ սրանք կարող էին գոյանալ այն ժամանակներում, երբ Տիգրանը և Արտավազդը, ուրիշ երկրներից բերելով, հայկական քաղաքներում, նաև Երվանդաշատում բնակեցրին հելլենիստական քաղաքների հույն, հրեա և այլազգի բնակչություն։

Շինությունների հետքեր նկատեցինք նաև վերին դարավանդի մի քանի այլ մասերում, որտեղ չէինք եղել 1954 թ.։ Մեզ համար պարզ դարձավ, որ պարիսպների մեջ, վերին և ներքին դարավանդների և բարձունքների վրա, հնում փռված է եղել մի իրոք խոշոր և ընդարձակ քաղաք՝ անտարակույս Երվանդաշատը։

Քաղաքի տեղանքի հետազոտությունը ցույց է տալիս, որ Երվանդաշատը կործանվել է հնում։ Միջին դարերում նրա տերիտորիայի վրա, ինչպես երևում է, առաջացել է մի վանք, որն իրեն կից բնակելի շենքերի խմբով բռնում է հին քաղաքի արևելյան թաղամասի մի փոքր մասը։ Միջնադարյան այլ շենքեր և խաղող ճզմելու հնձաններ նկատելի են նաև քաղաքի տարածության հյուսիս-արևմտյան մասում։

Վերևում արդեն հիշատակեցինք, որ ուշ միջնադարյան մի փոքրիկ ամրոց կառուցվել է Արաքսի և Ախուրյանի գետախառնուրդի մոտ, Բախչալար գյուղի հարավում, որտեղ հետագայում կարող էին հասած լինել Երվանդաշատի արևմտյան արվարձանները։ Դրանից ավելի արևելք, հավանաբար հին քաղաքի արևմտյան թաղամասում, XIX դարում կառուցվել է կազակների պահակատունը։ Այսպիսով պետք չէ կարծել, որ քաղաքի ավերակների մեծագույն մասը պահպանվել է հին ժամանակներից և վերին աստիճանի հարմար է պեղումների համար։ Հնագետն այստեղ առանց երկար ու բարակ որոնումների կարող է ձեռնարկել գետնի երեսին երևացող շենքերի մի քանի խոշոր կոմպլեքսների պեղումները։ Մեր դիտողությունները ստուգեցինք նաև 1963 թ.։

Երվանդաշատի տեղադրության համար լրացուցիչ փաստարկ է և այն, որ Խորենացու վկայությամբ՝ քաղաքի շինությունը ավարտելով, Երվանդը հիմնադրեց Բագարանը, որտեղ կառուցեց մեհյաններ և այնտեղ փոխադրեց աստվածների բագինները։ Խորենացին ասում է, թե Բագարանը հիմնադրվեց «իբրև քառասուն ասպարեզով» Երվանդաշատից հյուսիս, որը կազմում է 9,2 կմ և միանգամայն համապատասխանում է մեր նշած վայրից մինչև Բագարան եղած հեռավորությանը։

1961 թ. հուլիսին լրացուցիչ դիտումներ կատարեցինք նաև Ախուրյանի ափին ընկնող բնակավայրում։ Այստեղ հին շենքերի վրա կառուցված միջնադարյան աշտարակը քանդված էր և հին շենքի մնացորդների վրա հարմարեցված մի փոքրիկ դիտակետ՝ սահմանապահների համար։

Դիտողությունները ցույց տվեցին, որ Ախուրյանի ձախ կամ արևելյան ափին հին քաղաքի ավերակները բռնում են 600—700 մետր երկարությամբ մի տարածություն՝ ձորում և նրա բարձրադիր լանջին։ Համարյա նույնպիսի երկարություն բռնող տարածության վրա ավերակների հետքեր հնագիտակով պարզորոշ կերպով նկատելի են նաև գետի աջ կամ արևմտյան ափին։ Ձախ ափի շենքերի հետքերը դիտեցինք ավելի մանրամասն և համոզվեցինք, որ դրանք իրոք կարող են պատկանել հայ մշակույթի հին (անտիկ) շրջանին։ Այդ երևում է նաև ավերակների մեջ գտնված կավե անոթների բեկորներից։ Միջնադարյան խեցեղենի մնացորդներ գտնվեցին վերևում հիշատակված մատուռի մերձակայքում։

Հին դարերի շենքերի մնացորդների առկայությունը, տեղանքը, որը հարմար է միայն փոքր քաղաք-ձևակերտի համար, ինչպես և շինությունների հետքերի առկայությունը գետի երկու ափերին՝ որոշակի են դարձնում, որ Երվանդակերտը գտնվել է հենց այստեղ։

Հիշենք, որ Խորենացու նկարագրությամբ քաղաքը գտնվել է Ախուրյանի երկու ափերին, իսկ «գետն բերանացեալ դարաւանդօք ափանցն՝ զերկթերթիսն նշանակէ շրթունս»։ Իրոք, քաղաքի հյուսիսային մասը բարձրադիր է, իսկ հարավային կողմում փռվում է հարթությունը, որը հասնում է մինչև Արաքսի ափը, համապատասխանելով Խորենացու վկայությանը՝ «իսկ հարաւոյ հարթութիւն դաշտացս»։

Այսպիսով, ոչ մի տարակուսանք չի մնում, որ Երվանդակերտը տեղադրված է Երվանդաշատից 3—4 կիլոմետր հեռավորության վրա, նրանից դեպի հյուսիս-արևմուտք՝ Ախուրյանի ձորում, դեպի Բազարան տանող ճանապարհի վրա, որտեղ մինչև այժմ պահպանվում են նրա ավերակների հետքերը։

Այժմ, երբ Երվանդաշատ և Երվանդակերտ քաղաքների տեղադրությունը պարզված է, նրանց սիստեմատիկ հնագիտական պեղումները խոշոր նշանակություն կունենային Հին Հայաստանի պատմության և նյութական մշակույթի ուսումնասիրության համար, ուստի պետք է հանդիսանան մեր կարևորագույն հեռանկարային խնդիրներից մեկը։

ГДЕ НАХОДИЛИСЬ ГОРОДА ЕРВАНДАШАТ И ЕРВАНДАКЕРТ?

Проф. Б. Н. АРАКЕЛЯН

(Резюме)

На основании письменных источников и археологических наблюдений автор статьи уточняет местонахождение города Ервандашат, основанного армянским царем Ервандом на рубеже III и II вв. до н. э. Устанавливается, что Ервандашат находился на левом берегу р. Аракс, у слияния с ней р. Ахурян, в полном соответствии с указанием Мовсеса Хоренаци.

На возвышенности между селениями Хербеклу и Бахчалар, ближе к первому из них, сохранились остатки городской стены, охватывающей довольно обширную территорию, на которой тут и там заметны фундаменты сооружений и стен, разделяющих друг от друга городские кварталы. Город был обнесен стеной, следы которой заметны на большом протяжении.

Определяется также местонахождение Ервандакерта, основанного тем же царем. Городские кварталы Ервандакерта простирались на обоих берегах р. Ахурян, севернее селения Бахчалар, где ошибочно предполагалось местонахождение Ервандашата.

Уточнение местонахождения Ервандашата и Ервандакерта открывает перспективы археологического изучения этих городских центров древней Армении, существовавших до IV в. н. э. Автор подчеркивает важность проведения археологических работ на территории названных городищ.